



“ՓԱՆՆԱԿԱՆ ՄԱՆԻ ՏՆՈՅԸ ՈՐ ԻՆՍԻ ՓԱՆ.” ՂՈՒԿ ԺԸ. 16.

ՀԱՏՈՐ ԼԵ.

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ, ՕԳՈՍՏՈՍ 1, 1906

ԹԻՒ 8

ՄԱՅՈՒՍ ՅԻՅԻ ՊԱՐԸ

Քանի մը ամիս առաջ շարաթաթաթ թերթ Աւետիքին մէջ պատմեցինք Տր. Պարնարայի գործը շատ աղքատ տղոց համար: Աղջիկները, զորոնք կը տեսնէք հոս, յիշեալ տղաքը պատասպարող տան նման տան մը մէջ են որ աղջիկներու համար բացուած է: Անոնցմէ սմանք որք են, և ոմանք արբեցող և մոլի ծնողներու զաւակներ: Անոնք թող տրուած էին փողոցներուն մէջ թափառելու և մուրալու, կամ շրջապատուած էին այնպիսի ապականիչ ազդեցութիւններէ, որոնք անշուշտ պիտի կործանէին անոնց բարոյականը: Իբր եօթանասունն այսպիսի աղջիկներ առած են մարդասէր անձեր և հաւաքած են այս տան մէջ, որ թէյո՞ղ գետին եզերքը չքեղ տուն մըն է և առաջ կը վերաբերէր Ռիլերմ Դ. Թագաւորին աղջկան: Աղջիկները հոն կը սորվին գործել, կը սորվին կերակուր եփել, լուսացք ընել, արդու կել, կարել և ուրիշ գործեր ընել: Բայց խաղալու ալ ժամանակ ունին: Մայիսի առաջին օրը տօն է Անդրիոյ մէջ, և հոս տեսնուող աղջիկները այդ օրը կը զբաղին խաղով մը զոր մեր մանկապարտէզի մանուկներէն շատը շատ աղէկ գիտեն: Անոնք գոյնզգոյն ժապաւեններ կը գործեն ցիցի մը շուրջը, զոր կը կոչեն Մայիսի Յից: Ուրախ կ'ըլլայինք եթէ բոլոր մեր մանուկները ունենային խաղի մեծ պարտէզ մը, և կարող ըլլային խաղալ այսպիսի չքեղ ծառերու տակ:

ՓԱՌԱՒՈՐ ՎԿԱՅՈՒԹԻՒՆ ՄԸ

Հետևեալը կը պատմուի հարուստ երկրաւորի մը վրայ, որ փոքրիկ գեղ մը գնաց ուր առաջ երբեք չէր գացած:

Տաք էր օրը և ինք ծարաւ, և իր

ծարաւը կ'աւելնար երբ վեր վար կը պտրտէր գեղին փողոցներուն մէջ ի զուր փնտռելով տեղ մը ուր կարելի ըլլար գտնել շուրճն աւելի զորաւոր բան մը: Վերջապէս կանգ առաւ, և անհամբերութեամբ հարցուց ծերուկ գեղացիի մը, որ տուն կը վերադառնար իր ցելեկուան աշխատութենէն, “ Ի՞նչպէս կ'ըլլայ որ գաւաթ մը ոգեկից ըմպելի չեմ կրնար գտնել այս ձեր թշուառ գեղին մէջ.” ըսաւ խիստ ձայնով մը:

Հետաքրքրական է գիտնալ թէ այդ աղնուականը ի՞նչ խորհեցաւ արդեօք երբ ծարաւով պապակած կը շարունակէր իր ճամբան: Բայց ի՞նչ փառաւոր վկայութիւն էր ասիկա ճան Ռէնսլիթ քարոզութեան: Այն խօսքը զոր դարէ մը աւելի առաջ խօսեցաւ անիկա, այդ գեղէն վտարած էր գիտնմուտութեան անէ՞ծքը. և ո՞վ կրնայ հաշուել այն բարի ազդեցութիւնը որ եղաւ այդ բիրտ բայց հաստատամիտ գեղացիներուն կեանքին վրայ: Ասկէ



Ծերուկը հասկնալով թէ իրեն խօսողը բարձրաստիճան անձ մըն է, զըլխարկը հանեց և ծռեցաւ խոնարհութիւն ըրաւ, բայց ասոր հետ մէկտեղ հպարտութեան բոց մը կար իր նուազկոտ աչքերուն մէջ երբ սպէս պատասխանեց. “ Տէր իմ, ասկէ հարիւր տարիէ աւելի առաջ ճան Ռէնսլիթ անուն մարդ մը եկաւ այս կողմերը.” Ծերուկը զայս միայն ըսաւ և շարունակեց իր ճամբան:

աւելի ի՞նչ աղնու յիշատակ կրնար բաղձալ ֆրիստոնեայ պաշտօնեայ մը:

ՀԱՐՈՐ ԱՆՈՒՆԸ

Վեր. Ի. Փ. Սքոթ, երբ իբրև միսիոնար կը գործէր Հնդկաստանի մէջ, փողոցին վրայ տեսաւ շատ տարօրինակ կերպարանքով կռապաշաններէն մէկը: Հարցուփորձ ընելով հասկցաւ թէ մարդը երկրին ներսի կողմերու ցեղերէն էր, որոնք

լեռնային դաւաճաններու մէջ կը բնակէին, և տարին անգամ մը վար կ'իջնէր առևտուրի համար. Հասկցաւ նաև թէ Աւետարանը երբեք քարոզուած չէր անոնց և թէ շատ վտանգաւոր էր անոնց մէջ երթալ, վասն զի մարդասպան մարդիկ էին անոնք. Միսիոնարը սաստիկ փափաք զգաց անոնց պատմելու Յիսուսի և անոր սիրոյն վրայով. իր բնակարանը գնաց, ծուկի վրայ եկաւ և աղօթեց Աստուծոյ որ ցուցնէ իրեն թէ ինչ ընելու է: Յետոյ ոտք ելաւ, պատրաստեց պալուսակը, առաւ իր ջութակը որով երգել սորված էր, և իր ճամբորդի դաւազանը և ճամբարայ ելաւ:

Երբ մնաք բարով ըսաւ իր ընկեր միսիոնարներուն, անոնք ըսին, «Մենք ձեզ ալ պիտի չտեսնենք նորէն. ըրածնիդ յիմարութիւն է»: Բայց ըսաւ ան, «Ես պէտք է որ Յիսուսը քարոզեմ անոնց»: Երկու օր ճամբորդեց գրեթէ առանց տեսնելու մարդկային էակ մը, մինչև որ վերջապէս ինքզինք գտաւ լեռներուն մէջ, վայրենիներու բազմութենէ մը շրջապատուած: Ամէն նիզակ իսկոյն անոր սրտին ուզողեցաւ. կը խորհէր թէ ամէն վայրկեան իր վերջին վայրկեանը պիտի ըլլար: Չգիտնալով թէ ուրիշ ինչ ընելու էր, հանեց իր ջութակը և սկսաւ աչքերը գոցած երգել և նուագել:

Ողջոյն մեծ էմանուէլին,
Թող պետութիւնք երկնից
Երկրպագեն ու զայն կարգեն
Արքայ, Տէր ամենից:

Վախնալով իր աչքերը բանալ, շարունակեց երգել յաջորդ տունը, և մինչ կ'երգէր,

Թող մեր երկրին լեզուք ամէն
Ըլան հոս ձայնակից,
Անոր փառք տան, զայն ընդունին
Արքայ, Տէր ամենից,

բացաւ աչքերը որպէս զի տեսներ թէ ինչ պիտի ընէին անոնք, և ահա նիզակները լինկած էին անոնց ձեռքերէն, և արցունքի խոշոր կաթիլներ կ'իյնային անոնց աչքերէն: Վայրենիները զանիկա իրենց տունները հրաւրեցին: Միսիոնարը անոնց մէջ անցուց երկու քուկէս տարի: Անոր ախտաւթիւնները այնպէս լիուրի վարձատրուեցան որ երբ իր հիւանդացած ըլլալուն համար ստիպուեցաւ անոնց մէջ բաժնուիլ և իր երկիրը վերադառնալ, մարդիկը երեսուն մղոն տեղ յուղարկ գացին անոր:

«Ով միսիոնար, նորէն եկուր մեզի, հեռուն ցեղեր կան որոնք բնակած չեն Աւետարանը»: Ըսին:

Միսիոնարը չկրցաւ մերժել անոնց աղաչանքները: Ամերիկա այցելելէն ետև նորէն ետ դարձաւ իր աշխատութիւնը շարունակելու, մինչև որ գերեզման իջաւ անոնց մէջ:

ԲԵՆԵՈՒԱՅԻՆ ԼՈՅՍԵՐ

Գիտենք թէ կայծակը կամ փայլակը յառաջ կու գայ ելեկտրականութեան պարպուելէն, երբ անիկա կ'անցնի մէկ ամպէն միւր, կամ ամպէ մը երկրի վրայ գտնուած առարկայի մը: Բայց փայլակէն բոլորովին տարբեր բան մը կայ որուն ալ պատճառը ելեկտրականութիւնն է: Անիկա երբեք չտեսնուիր: Հաստատուածին մօտ. և միայն քիչ անգամ կը տեսնուի կոստանդնուպոլսոյ լայնութեան մէջ, բայց Բեւեռներուն մօտ երբ շատ կը պատահի: Բեւեռային

չէնքի մը առջև, որ գեղեցիկ համեմատութեամբ շինուած իր բազմաթիւ յարկերով կը բարձրանար փողոցէն վեր: «Ինչ հաստ ստուն կ'երևի»:

«Այո», ըսաւ հօրեղբայրը Ռուբէն, ինք ալ նայելով շէնքին վրայ, «և սակայն բուն էական բանը — շէնքին ճշմարիտ, ոյժը — չես տեսներ»: «Մի՞ն է այն», հարցուց Յովհաննէս:

«Յիցերը որոնց վրայ դուռած են հիմերը: Ոնէ ուրիշ գործ սկսելէ օրեր առաջ խոշոր գերաններ խիտ և խոր գետինը խոթուեցան: Առանց անոնց այս պատերը, թէև ահագին և թանձր, տկար պիտի ըլլային, և անոնք են որ շէնքը զօրաւոր կ'ընեն: Ես շատ անգամ խորհած եմ», շարունակեց հօրեղբայրը Ռուբէն երբ մէկտեղ կը քալէին, «թէ ինչպէս առհասարակ աչքէ ծածկուած են և չեն տեսնուիր բուն էական բաները»: «Այդպէս է», հարցուց Յովհաննէս:



լոյսերը, ինչպէս կը կոչուին անոնք, վաղանցուկ բոցեր չեն, այլ ժամերով կը շարունակեն, և բեւեռային երկայն գիշերներուն մէջ շատ պայծառ են և գեղեցիկ: Այլևայլ ձևեր կ'առնեն. որոնց ամէնէն հասարակն են լուսեղէն սիւներ, հորիզոնէն դէպի վեր ցցուած, ինչպէս կը տեսնէք պատկերին մէջ: Փոթորիկներէ չեն ազդուիր անոնք, բայց կ'երևին պարզ երկինքին մէջ, և որոտուի հետ գործ չունին: Թէև անոնք կատարելապէս բացատրուած չեն, հասկնուած է սակայն թէ ելեկտրականութեան արդիւնք են: Բայց թէ ինչ է ելեկտրականութիւնը, ոչ ոք կրնայ ըսել:

ԲՈՒՆ ԷԱԿԱՆ ԲԱՆՆԸ

«Ինչ աղուոր է, ըսաւ Յովհաննէս հիացած կայնելով նոր աւարտած

նէս: «Ի՞նչ քիչ մը խորհիս, պիտի տեսնես թէ այսպէս է: Առնենք ծառ մը, օրինակի համար: Կը տեսնես անոր բունը, տերևները, ճիւղերը: Բայց զանիկա գետնին մէջ հաստատ բունող արմատները, որոնք հողէն կը քաշեն անոր կեանքը, աչքէ ծածկուած են: Այն մեծ շոգենաւերուն մէջ, զորոնք այնքան հաճոյքով կը գիտես, մեքենան, դանոնք մղող ոյժը, ծածկուած է կողմ մը, ուր քիչեր երբեք կը տեսնեն զանիկա: Նաև երկրիս հանքային զանձերը — ոսկին, արծաթը, երկաթը, հանքածուխը, բոլոր թանկագին քարերը — աչքէ ծածկուած են և նախ պէտք է որ քննուին»:

«Ինչ ալ ըլլայ, մարդիկ ծածկուած չեն», ըսաւ Յովհաննէս երբ կը նայէր մարդոց բազմութեանը, որոնք կ'անցնէին կը դառնային: «Իրաւ է որ մենք մեզի հանդիպող

մարդոց երեսը և կերպարանքը կը տեսնենք, անոնց ձայնը կը լսենք, բայց վերջապէս ծածկուած են անոնց սիրտը և ուղեղը, այս կենսական գործարանները, և մանաւանդ ամէն ինչ որ ամէնէն բարձր և լաւագոյն է մարդոց մէջ — սէր, պատիւ, ուղղամտութիւն — ամէն ինչ որ կը շինէ նկարագրի կոչումը, ոչ միայն ծածկուած է, հապա այնպիսի բան մըն է որ չկրնար տեսնուիլ: "Բայց եթէ մարդ մը ուղղամտ է, կրնանք տեսնել անոր ուղղամտութիւնը":

"Մենք արդիւնքը կրնանք տեսնել, ինչպէս կրնանք տեսնել այդ շէնքին պատերը, բայց բուն ոյժը ծածկուած է":

"Ստիկա զարմանալի է, ըսաւ Յովհաննէս մտածելով: "Հօրեղբայր, դուք կ'ըսէք թէ ամէն բան իր նշանակութիւնն ունի: Այս ինչ կը նշանակէ":

"Թեքուս բանի մը համար, պէտք չէ որ բոլորովին դուրսի երևոյթի նայինք, այսինքն երևցածին: Մենք այնքան հակամէտ ենք մեր տեսածին վրայ միայն խորհելու որ պէտք ունինք որ շարունակ յիշեցուին մեզի այն ուժեղ և ներսը գտնուած զօրութիւնները որոնք անտեսանելի են: Մենք նաև պէտք է աղէկ հասկնանք թէ մեր արտաքին կեանքերը զօրաւոր և շիտակընելու համար պէտք է ներսը ծածկուած ոյժեր գտնուին — սէր՝ որպէս զի մեզ գլխած ընէ, մաքրութիւն՝ որպէս զի մեզ գեղեցկացնէ, նպատակ՝ որպէս զի յոյս ներշնչէ մեզի, և բոլոր ասոնց ներքեւ, իրեն վեր բռնող հիմք, հաւատք՝ որ արդարև, յուսացուած բաներուն հաստատութիւնը ու չերևցած բաներուն ապացոյցն է":



ՊՈՒՇՄԱՆ ՈՐՍՈՐԴՆԵՐԸ

Հարաւային Ափրիկէի Պուշմանները երբեք իրենց քմահաճոյքին (քէյֆ) համար չեն սպաններ որսի կենդանիները կ'ըսէ Հարաւային Ափրիկէի Բէնի Յեֆրէ անունը գիրքին հեղինակը: Անոնք գոհ կ'ըլլան իրենց և իրենց ընտանիքներուն համար բաւական որս զարներով: Անոնք զգուշաւորութիւն և հնարամտութիւն, պաղարիւնութիւն և աշարժութիւն աղէկ մշակած ըլլալու են որ կարող են ձեռք անցնել վայրի անասունները, որոնց այնքան պէտք ունին իրենց ապրուստին համար:

Պուշմանները վաղրձի կոչուած անասունը որսալու համար շայլամի մորթ կը հագնին, և երկար, դիւրաթեք բարակ ձող մը կ'անցնեն պարանոցին մէջէն որպէս զի գլուխը վեր ցցուի և

կարող ըլլան կեղծ շայլամին տալ անոր բնական շարժումը ժուռ գայուատեն: Անոնցմէ շատեր շատ ճարտար են ողջ թռչունին նմանելու կողմանէ: Երբ տեսնեն վաղրձի երամակ մը, որոնց վրայ կ'ուզեն յարձակիլ, ուղղակի չեն վազեր անոնց վրայ, այլ անհող կերպով մը կը գառնան անոնց բոլորաթիւքը, հետո՞հետէ մտենալով անոնց: Այս միջոցին կեղծ թռչունը այնպէս կը ցուցրնէ թէ կը ճարակի և կը կտցէ իր ճամբուն վրայ գտնուած զանազան մացառները կամ իր գլուխը փետուրներուն կը քսէ, երբեմն կանգ կ'առնէ կը նայի, երբեմն գաղտուկ գաղտուկ կը շարժի դէպի որսը, մինչև որ վերջապէս կեղծ շայլամը այնպէս կը ցուցնէ թէ անոնց մէջերը կը ճարակի:



Որսորդը կ'որոշէ իր որսը և մահացու նետը կ'արձակէ և անմիջապէս կը սկսի նորէն շարունակել ճարակիլ: Վերաւորուած կենդանին յառաջ կը ցատկէ քիչ մը հեռուն, միւսները քանի մը երկչոտ քայլեր կ'առնեն, բայց տեսնելով որ վախճալու բան չկայ, այլ միայն բարեկամ շայլամը որ հանդարտ կ'արածի, նորէն կը խաղաղին, և այսպէս առիթ կու տան ճարտար որսորդին որ երկրորդ կենդանիի մը նշան առնէ:

ՈՍԿԻ ԳՊԱԿԸ

Եթէ Հօլանտա այլցելիք, տարօրինակ հազուատներ պիտի տեսնէիք:

Անոնցմէ մէկն է փայտէ կօշիկը որ շատ հասարակ է աղքատ դասակարգին մէջ: Անոնք չեն նմանիր արաբներու զոր կը հագնին այս երկրի կիները, այլ կօշիկի ձևով կը շինուին և ոտքերը անոնց մէջ կը մտցուին: Կը գործածուին ոչ միայն տան մէջ աշխատելու ժամանակ, այլ փողոցներուն մէջ ալ և ամէն տեղ: Աւելի հետաքրքրական բան մը ոսկի գդակն է զոր կիները կը դնեն: Ոսկէ առաջ կոստանդնուպոլսոյ մէջ Հօլանտացի պաշտօնեայի մը սպասուհին, որ յաճախ Անգղիերէն պաշտամունքին կու գար Հօլանտական դեսպանատան մատուռը, միշտ կը դնէր իր ոսկի գդակը: Անիկա այժմէսութիւնը կորսնցուցած և ճիշդ գիտուն փակած գդակ մըն էր: Բարձր դասակարգի տիկիները, որոնք ոսկի գդակ կը դնեն, ընդհանրապէս զանիկա կը ծածկեն ծանրագին ժանեակով (տանթէլա), բայց վերոյիշեալ կիներ զանիկա առանց ծածկելու կը դնէր:

Այս սովորութեան հետ կապակցութիւն ունեցող շահեկան պտտմութիւն մը կայ: Պատմութիւնը ետ կ'երթայ մինչև այն ժամանակ երբ Հօլանտայի ժողովուրդը կռապաշտ էր: Անոնց ցեղապետներէն մէկը սովորութիւն ունէր կուռքի քահանաներուն դիմելու և անոնց խորհուրդ հարցնելու իր ընելու գործերուն համար: Ժամանակ մը երբ կրկին և կրկին յաղթուեցաւ ճակատամարտի մէջ և անոնց հարցուց թէ ինչ է պատճառը, անոնք պատասխանեցին թէ պատճառն այն է որ իր ժողովուրդէն ոմանք Գրիստոնեայ եղած էին: Երբ հարցուց թէ ո՞վ են անոնք, ըսին թէ անոնցմէ մէկը քու աղջիկդ է: Աղջիկը, թէև ամէն ուրիշ բանի մէջ իր հօրը հնազանդ էր, սակայն քսաւ թէ չէր կրնար կուռք պաշտել: Անոր համար ցեղապետը իր աղջկան համար երկաթ գդակ մը շինել տուաւ, և զանիկա ստիպեց որ շարունակ իր գլուխը դնէ այդ գդակը: Այս երկաթ գդակը ծանր էր, կոշտ կերպով շինուած էր և կը ցուցնէր աղջկան գլուխը, բայց անիկա հաւատարիմ մնաց իր կրօնքին: Եւ սակայն ցեղապետը տակաւին անյաջող եղաւ ճակատամարտի մէջ և վերջապէս իր հաւատքը վերցաւ կռապաշտական կրօնքին վրայէն, և ինք ալ ընդունեց Գրիստոնէութիւնը: Այն ատեն ցեղապետին բաղդը դարձաւ, և տնիկա յաջողութիւն գտաւ:

Եւ իր աղջկան գէմ ցուցած ան գթութիւնը քաւելու համար, անոր ոսկիէ գդակ մը շինել տուաւ: Այս եղաւ այդ սովորութեան սկիզբը: Այս տեսակ գդակ գործածելու սովորութիւնը ընդհանրացած է Յրիստոսի հրահրանքին նահանգին մէջ մասնաւորապէս, ուր ապրեցաւ յիշեալ ցեղապետը: Այդ գդակը զնոյ կինները պէտք է որ զոհեն իրենց մազը, և զանիկա կարճ պահեն:

ՏՂՈՒ ՄԸ ՕԳՆՈՒԹԻՒՆԸ

Օգնութիւնը զոր տղայ մը կրնայ ընել, սիրով կ'ընդունուի ամէն տեղ, բայց մանաւանդ կը փնտռուի և կը գնահատուի Քրիստոսի եկեղեցիին մէջ: Հետեւեալ պատմութիւնը կը ցուցնէ թէ տղայ մը ինչպէս գտաւ պատեհութիւն մը և աղէկ գործածեց զանիկա:

Տիգրան հոգեւորապէս արթննալէն շուտ ետքը ծննդավայր գեղը վերադարձաւ, ժամանակ մը հոն մնալու համար: Որոշած էր զպրոց մտնել, բայց մինչև զպրոցներուն բացուելու ժամանակը հօրը ազարակը գնաց աշխատելու: Մաստիկ եռանդով լեցուն էր իր հոգևոր նոր վիճակին համար: Առաջին պատեհութիւնով իրենց եկեղեցին գնաց, և ինդրեց եկեղեցւոյ անդամ ընդունուիլ, հաստատ որոշելով որ օգտակար ծառայութիւն ընէ եկեղեցիին: Երէցը շատ ուրախ եղաւ անոր ցուցած այդ ոգիին համար, և անսովոր կերպով քաջալերուեցաւ անոր պայծառ գէմքը տեսնելով փոքրիկ աղօթածողովին մէջ: Ժողովին մէջ ներկայ գտնուող տղայ մէկը Տիգրան էր, որ պաշտօնին մասնակցեցաւ մանկական եռանդով: Եւ քիչ յետոյ ուրիշ պատկերներու ձայներ ալ լուսեցան աղաթքներուն մէջ: Այդ տարի գեղի այդ եկեղեցիին ամէն ժամանակէ աւելի անդամներ աւելցան: Տիգրան իր մանկական նախանձաւորութեամբ աշխատեցաւ եկեղեցիին չափահաս անդամներուն մէջ և մեծ յաջողութիւն գտաւ ու քաջալերուեցաւ: Այդ ժամանակէն ետքը զպրոցներու մէջ կարգաց, և հիմա մեծ ժողովրդի մը պաշտօնեան եղած է: Բայց երբեք կարող չեղաւ ոնէ ժամանակ այնչափ օգտակար ըլլալ որչափ եղաւ իր մանկութեան այն տարին: «Ո՛հ, երանի՜ թէ տղաք լաւ գործածէին Յիսուսի ծառայելու իրենց պատեհութիւնները,» կ'ըսէ անիկա հիմա:

ԻՆՉ ՈՐ ՍՏԱԿԸ ՁԻՐ ԿՐՆԱՐ ԳՆԵԼ

«Կառուցող, որչափ պիտի կենանք հոս» և կը վախճամ թէ ժամու մը չափ կենալ հարկ պիտի ըլլայ: Երկաթուղիին գիծը սւրուած է մեր առջև, և քիչ մը ժամանակ պիտի անցնի մինչև որ շտկուի:»

Ճամբորդը մը մնջեց թէ ինչ աղէկ է զայդ գիծը, ինչպէս կ'ըսեն ճամբուն վրայ մնացող ճամբորդները ընդհանրապէս: Բայց անոր տղան Յովհաննէս խորհեցաւ թէ զբօսանք է ժամ մը խոր անտառներուն մէջ կենալ, Յովհաննէս քաղաքի տղայ ըլլալով անտառը շատ ազուտ կ'երեւէր իրեն:

«Հայրիկ, ինձի հրաման կուտամ որ երթամ քիչ մը խաղամ սա գեղացիներուն հետ» Դժուար հետու միերթալ, կառախուրին մօտերը կեցիր, ըսաւ հայրը:

Ժամանակը իրիկուն էր և մթնելու վրայ: Յովհաննէս քիչ մը քաշէնէն ետքը նորէն ետ կառքին պատուհանին քով եկաւ և, «Հայր, ծառերուն մէջ անակ մը կը տեսնեմ, և ներսը լոյս կ'երևի, հոն երթամ: Նայիմ ո՞վ կայ աս տնակին մէջ?» Հայրը ժամացոյցը նայեցաւ և, «Միայն երեսուն վայրկեան կու տամ քեզի,» ըսաւ, «հետոյ առ ժամացոյցս, և չըլլայ որ կէս ժամէ աւելի ուշանաս»:

Յովհաննէս զրպանը դուռ ժամացոյցը և վազեց գնաց ծառերուն մէջէն: Երբ տնակին դուռը հասաւ, վայրկեան մը կանգ առաւ: Մտածեց թէ դուռը զարնելու ինչ պատճառանք կրնար գտնել:

«Իրաւ, ես ծարաւ եմ,» ըսաւ շնչապառ վազող այս տղան, «մտնելու շուր ուզեմ»: Դուռը ամուր զարկաւ, «Մտեք,» ըսաւ ձայն մը զարմացկոտ չեչուով մը, և բացուեցաւ դուռը: Տնակին մէջ մէկ հոգի միայն կար, սևամորթ տղայ մը Յովհաննէսի տարիքով և անկողին պառկած էր:

Մեր ճամբորդ տղան շուտով խմեց շուրը, հասցաւ թէ տնակին մէջ պառկած տղուն անունն էր Յակոբ: Թէ անոր հօրը արհեստն էր փայտահարութիւն, և թէ քանի մը շարաթ առաջ ծառ մը ինկած և Յակոբի ոտքը կտորած էր: «Հայրս ընդհանրապէս այս ատեն տուն կը դառնայ, և կարծեմ այս ատեն քիչ մը ուտելիք պիտի բերէ: Մայրս խոհարար է ասկէ մըտնի մը չափ հեռուն, և տուն չկրնար դառնալ ինչևէ իրիկունն ճաշէն ետև:»

«Դուն մինակ ես ասանկ հէ,» ըսաւ Յովհաննէս: «Մինակ մնայս այնչափ հոգս չէ ցերեկին, բայց երբ գիշեր ըլլայ մթննայ, այն ատեն դժուարս կու գայ,» պատասխանեց Յակոբ:

Յովհաննէսի սիրտը շատ ցաւեցաւ այս անկողնի ծառայող տղուն շարքս:

րանքը տեսնելով: Ինչ կրնար ընել, ինք միայն քանի մը վայրկեան կրնար մնալ, ստակ չունէր զրպանը, բայց դուռը հանեց իր գեղեցիկ զմեղին և մտաքս թաղիկնակը: Եւ զանոնք Յակոբի երկնցնելով, «Ահա, Յակոբ, ասոնք պահէ իբրև իմ յիշատակս,» ըսաւ: Երբ զանոնք անկողնին վրայէն կ'անցնէր, Յակոբի վառած պղտիկ կանթեղին դէմ՝ ճերմակ պատին վրայ ինկած շուրը իր ձեռքին մէկ խոյր պատկերը ձևացաւ: «Ո՛հ, հոս նա յէ,» պոռաց Յովհաննէս: Գիտե՞ս գայլի զլուխ շինել, իրար բեր կրկն ձեռքերդ, այսպէս բթամատերդ վեր: հիմա ձախ ձեռքդ առաջին երեք մատերը վարարէ քիչ մը (միայն քիչ մը), և բորբոլին ցցէ չորրորդ մատդ: հիմա վեր վար շարժէ զանիկա տես:»

Կաղ տղան ինդպէս ճաթեցաւ երբ գայլի մը գլխուն և անոր շարժող ծնօտին շուրը ինկան ճերմակ պատին վրայ:

«Ահա ուրիշ մըն ալ,» ըսաւ Յովհաննէս ախոյժով, «բայց ասիկա աւելի դժուար է: Այլ ձեռքդ ձախիդ վրայ դիր, առաջին և չորրորդ մատերդ ծայրերը ականջներու համար թողելով: Երկրորդ և երրորդ մատերդ ծուռ սանկ, ցուրկի համար: ձախ ձեռքդ երկու մատերը վարի ծնօտի համար: Երկամատդ և ուրիշ մատերդ՝ սրունքներու համար: ահա:»

Յակոբ մէյմալ բարձրաձայն խնդաց տեսնելով շիտակ նստած խողի մը շուրը:

«Հիմա պէտք է որ վազեմ,» ըսաւ Յովհաննէս, «երանի՜ թէ քեզի տալու քիչ մը ստակ ունենայի:»

«Տէրը օրհնէ քեզ, փոքրիկ պարոն,» ըսաւ ձայն մը դրան քովէն, «դուն խեղճ Յովհաննէսին անանկ բան մը տուիր որ ստակը չէր կրնար գնել, այսինքն անոր սաստիկ խնդալը:» Յակոբի հայրը կարծես պիտի լար իր ուրախութենէն, և երբ Յովհաննէս գնաց, կաղ տղան իր հօր ցուցուց իր նոր զբօսանքը:

«Քեզի կը նախանձիմ այդ վայելած առիթիդ համար, տղա, որով թեթեւցուցիր այդ խեղճ տղուն ձանձրալի բեռը:» ըսաւ Յովհաննէսի հայրը, երբ կառախուրը ճամբայ ելաւ:

«Հայր,» ըսաւ Յովհաննէս կամացուկ մը, «կարելի է թէ Աստուած կառախուրը ատոր համար կեցուց:» «Կրնայ ըլլալ,» պատասխանեց հայրը նոյն շեշտով:

Տարեկան բաժանորդագրին 6 դահ. արժեք կանխիկ, ամէն տեղուր համար:

Աւերելոյի Միտիսարաց Ընկերութեան կողմէն Արտօսատէր ձ. Բ. ԿԻՒՆ

Տնօրէն—Խմբագիր Լ. Ս. ՊԱՐՆԸՄ

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ
Ի ՏՊԱՐԱՆ Ա. ՅԱՌՈՐ ԳՈՅԱՆՈՒՆ
Ֆինանսները Եղեղու: Աւերելոյի Խում